



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

02 նոյեմբերի 2020 թվականի թիվ 137-Ս

ք. Երևան

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 32-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի ընտրության ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

02 նոյեմբերի 2020թ.

ք. Երևան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով սահմանվում է Հանրային հեռարձակողի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի ընտրության կարգը:
2. Խորհրդի նախագահ ընտրվում է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով և սույն ընթացակարգով սահմանված կարգով:
3. Խորհրդի նախագահ չի կարող ընտրվել Խորհրդի անդամի թափուր պաշտոն լինելու դեպքում:
4. Խորհրդի նախագահ ընտրվում է չորս տարի ժամկետով:
5. Խորհրդի անդամը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Խորհրդի նախագահ:
6. Խորհրդի նախագահ երեք անգամ անընդմեջ չընտրելու դեպքում Խորհուրդն արձակվում է, իսկ արձակված Խորհուրդը շարունակում է իր գործունեությունը մինչև նոր Խորհրդի ամբողջական ձևավորումը:

2. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

7. Խորհրդի նախագահի լիազորություններն ավարտելու կամ այլ հիմքով Խորհրդի նախագահի թափուր տեղ առաջանալու դեպքում Խորհուրդն իր կազմից ընտրում է Խորհրդի նախագահ:
8. Խորհրդի նոր նախագահի ընտրությունը կատարվում է Խորհրդի անդամների կազմը համալրվելուց, իսկ եթե Խորհրդի անդամների համալրման կարիք չկա, ապա Խորհրդի նախագահի թափուր տեղ առաջանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում :
9. Սույն կարգի 2-րդ մասի 8-րդ կետով սահմանված ժամկետում Խորհրդի նախագահի ընտրության նպատակով հրավիրվում է Խորհրդի նիստ, որը վարում է Խորհրդի տարիքով ավագ անդամը: Խորհրդի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են Խորհրդի բոլոր անդամները:

10. Խորհրդի անդամը կարող է առաջադրվել որպես Խորհրդի նախագահ ինքնաառաջադրման կամ Խորհրդի որևէ այլ անդամի կողմից առաջադրվելու եղանակով (վերջինիս համաձայնությամբ):

11. Խորհրդի նախագահի ընտրության համար գաղտնի քվեարկում են Խորհրդի բոլոր անդամները:

12. Խորհրդի անդամն իրավունք չունի հրաժարվելու քվեարկությունից և քվեարկում է միայն «կողմ» կամ «դեմ»:

13. Քվեարկության համար կազմվում է քվեաթերթիկ, որում ներառվում են բոլոր թեկնածուները:

14. Քվեարկելիս Խորհրդի անդամն ունի մեկ ձայն: Եթե քվեարկության մասնակիցն ավելի ձայն է տվել, ապա այդ քվեաթերթիկը համարվում է անվավեր:

15. Եթե քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել ձայների կեսից ավելին, ապա ինքնաառաջադրվում են առավել ձայներ ստացած երկու թեկնածուները, և անցկացվում է լրացուցիչ քվեարկություն:

16. Եթե երկրորդ առավել ձայներ ստացած թեկնածուները երկուսն են, ապա հավելյալ քվեարկությամբ որոշվում է, թե նրանցից ով կարող է ինքնաառաջադրվել:

17. Լրացուցիչ քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Լրացուցիչ քվեարկության ժամանակ ձայների թվի կեսից ավելին ստացած թեկնածուն համարվում է ընտրված: Եթե ոչ մեկը չի ստացել քվեարկության մասնակիցների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ, ապա անցկացվում է նոր ընտրություն:

18. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

19. Խորհրդի նախագահի ընտրությունն ավարտվելուց հետո Խորհուրդը որոշում է կայացնում Խորհրդի նախագահ ընտրելու մասին, որի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվում է Խորհրդի պաշտոնական ինտերնետային կայքում: